## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

### ԼՃԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ 22 Ն

12.12.2017 թ.

Լճափ համայնքի 2018 թվականի բյուջեի նախագծը հաստատելու մասին

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի, համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Լճափ համայնքի 2018թ. բյուջեի նախագիծը՝

ա/ եկամուտների գծով **27774.0** հազ.դրամ

բ/ ծախսերի գծով **28774.0** հազ.դրամ

գ/ հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասուրդը/ **1000.0** հազ.դրամ

2. Հաստատել համայնքի բյուջեի նախագծի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հավելված 1-ի
3. Հաստատել համայնքի բյուջեի նախագծի ծախսերը ըստ գործառնական դասակարգման համաձայն հավելված2-ի
4. Հաստատել համայնքի բյուջեի նախագծի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման համաձայն հավելված 3-ի
5. Հաստատել համայնքի բյուջեի նախագծի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասուրդը/ համաձայն հավելված 4-ի 2018թ. պակասուրդը կազմում է 1000.0 հազ. դրամ
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հավելված 5-ի

2018թ. բյուջեի նախագծի պակասուրդը ֆինանսավորվելու է վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից՝ 1000.0 հազ. դրամ:

Ընդամենը՝ **1000.0** հազ. դրամ:

Քանի որ նախորդ տարում վարչական բյուջեի մասով պարտքային պարտավորություն չկա, ուստի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը 1000.0 հազ. դրամը ուղղել ուղղել ֆոնդային մասի ծախսերի ֆինանսավորմանը:

ա/01 բաժնի 1 խմբի 1 դասի 5113 հոդվածի– Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում- **1000.0** հազ. դրամ

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը սահմանել **1500.0** հազ. դրամ:

Հաստատել համայնքի բյուջեի նախագծի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 6-ի.

7.Սահմանել որ՝

ա/ Ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները.

բ/ Ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ նախատեսված հոդվածների միջև «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան կատարվող վերաբաշխումների չափաքանակը համայնքի ղեկավարի կողմից 2017թ. բյուջեի կատարման ընթացքում սահմանել 15%-ի չափով:

Լճափի համայնքի ղեկավար՝ Հ.Սիմոնյան

Աշխատակազմի քարտուղար՝ Ս.Եփրեմյան

/Իսկականի հետ ճիշտ է/